# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ -ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին

ՈՒրախ ենք տեղեկացնել, որ **23.11.2017թ**.-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում հաջողությամբ տեղի ունեցավ **«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի** կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թվով երրորդ տեղաբաշխումը՝ ստանդարտ փակ աճուրդի միջոցով:

Աճուրդի ժամանակ տեղաբաշխվող պարտատոմսերն ունեցան աննախադեպ բարձր պահանջարկ՝ դոլարային տրանշի պարտատոմսերի պահանջարկը տեղաբաշխման ծավալի նկատմամբ 146% էր, իսկ դրամային տրանշինը՝ 220%: Մեծ է եղել նաև աճուրդի մասնակիցների թիվը: Նման բարձր պահանջարկը վկայում է տվյալ արժեթղթերի նկատմամբ ներդրողների մեծ հետաքրքրության մասին, ինչը պայմանավորված է վերոնշյալ պարտատոմսերի ներդրումային առավելություններով՝ բարձր և գրավիչ տոկոսադրույքներ, բարձր իրացվելիություն /հիմքում ունենալով «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի նախորդ թողարկումների պարտատոմսերի ձևավորած ակտիվ երկրորդային շուկան՝ գործարքների ծավալներն ու քանակը, ինչպես նաև մարքեթ-մեյքերի առկայությունը/, բարձր ֆինանսական ցուցանիշներ ունեցող հուսալի թողարկող ընկերություն և այլն:

Նշենք նաև, որ ինչպես նախորդ թողարկումների ժամանակ, այս անգամ նույնպես որպես տեղաբաշխող հանդես է գալիս «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ-ն: Վերջինս հաջողությամբ իրականացնում է թողարկման և տեղաբաշխման կազմակերպման բոլոր անհրաժեշտ գործառնությունները: «ՌԵՆԵՍԱ» ներդրումային ընկերությունը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում կիրականացնի նաև պարտատոմսերի ամենօրյա գնանշումներ՝ ապահովելով նշված արժեթղթերի բարձր իրացվելիությունը:

Տեղաբաշխման արդյունքները առավել մանրամասն ներկայացվում են ստորև.

**<u>Առաջին տրանշ՝ դոլարային պարտատոմսեր</u>**

| | |
|---|---|
| **Պարտատոմսերի դասը, ձևը** | Անվանական արժեկտրոնային, ոչ փաստաթղթային |
| **Պարտատոմսի տարբերակիչ ծածկագիր (ԱՄՏԾ)** | AMGLBLB25ER6 |
| **Թողարկման ամսաթիվ (օր/ամիս/տարի)** | 23.11.2017թ. |
| **Տեղաբաշխման ամսաթիվ (օր/ամիս/տարի)** | 23.11.2017թ. |
| **Մարման ամսաթիվ (օր/ամիս/տարի)** | 23.11.2020թ. |
| **Թողարկման ծավալ (ԱՄՆ դոլար)** | 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար |
| **Տեղաբաշխման ծավալ (ԱՄՆ դոլար)** | 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար |
| **Ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալ /ԱՄՆ դոլար/** | 1,456,410.65 (մեկ միլիոն չորս հարյուր հիսունվեց հազար չորս հարյուր տասը) ԱՄՆ դոլար և 65 (վաթսունհինգ) ցենտ |

| | |
|---|---|
| **Բավարարված գնման հայտերի ընդհանուր ծավալ /ԱՄՆ դոլար/** | 1,000,410.65 (մեկ միլիոն չորս հարյուր տասը) ԱՄՆ դոլար և 65 (վաթսունհինգ) ցենտ |
| **Աճուրդի մասնակիցների քանակ** | 6 |
| **Պահանջարկը տեղաբաշխված ծավալի համեմատ** | 146 % |
| **Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը** | 100.00 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար |
| **Տեղաբաշխված արժեթղթերի կտրման եկամտաբերություն** | 7% |
| **Տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերություն** | 6.9846% |
| **Մեկ պարտատոմսի անվանական արժեք (ԱՄՆ դոլար)** | 100.00 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար |
| **Արժեկտրոնային եկամտաբերություն** | 7 (յոթ) % |
| **Արժեկտրոնի վճարման պարբերականություն** | կիսամյակային |
| **Քանակ (հատ)** | 10,000 (տասը հազար) |

## Երկրորդ տրանշ՝ դրամային պարտատոմսեր

| | |
|---|---|
| **Պարտատոմսերի դասը, ձևը** | Անվանական արժեկտրոնային, ոչ փաստաթղթային |
| **Պարտատոմսի տարբերակիչ ծածկագիր (ԱՄՏԾ)** | AMGLBLB16ER5 |
| **Թողարկման ամսաթիվ (օր/ամիս/տարի)** | 23.11.2017թ. |
| **Տեղաբաշխման ամսաթիվ (օր/ամիս/տարի)** | 23.11.2017թ. |
| **Մարման ամսաթիվ (օր/ամիս/տարի)** | 23.11.2018թ. |
| **Թողարկման ծավալ (ՀՀ դրամ)** | 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ |
| **Տեղաբաշխման ծավալ (ՀՀ դրամ)** | 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ |
| **Ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալ /ՀՀ դրամ/** | 659,025,879.8 (վեց հարյուր հիսունինը միլիոն քսանհինգ հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ և 8 (ութ) լումա |
| **Բավարարված գնման հայտերի ընդհանուր ծավալ /ՀՀ դրամ/** | 300,025,879.8 (երեք հարյուր միլիոն քսանհինգ հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ և 8 (ութ) լումա |
| **Աճուրդի մասնակիցների քանակ** | 5 |
| **Պահանջարկը տեղաբաշխված ծավալի համեմատ** | 220 % |
| **Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը** | 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ |
| **Տեղաբաշխված արժեթղթերի կտրման եկամտաբերություն** | 10 % |
| **Տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերություն** | 9.9908% |
| **Մեկ պարտատոմսի անվանական արժեք (ՀՀ դրամ)** | 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ |
| **Արժեկտրոնային եկամտաբերություն** | 10 (տասը) % |
| **Արժեկտրոնի վճարման պարբերականություն** | կիսամյակային |
| **Քանակ (հատ)** | 30,000 (երեսուն հազար) |

Լրացուցիչ տեղեկությունների կամ հարցերի դեպքում կարող եք զանգահարել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարներով՝ +(374 11) 70 01 00, 70 02 00 կամ «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարով՝ +(374 10) 54 87 87: